



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան

30 սեպտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը, գործելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի, 69-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի հիման վրա, մասնակցությամբ դատավորներ Վ. Գրիգորյանի (նախագահող), Ա. Դիլանյանի և Ա. Թունյանի, քննության առնելով «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Չ Ե Ց .

1. «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2020 թվականի օգոստոսի 27-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 3-րդ և չորրորդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատական կազմի նախագահողի միջնորդությունը՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով սույն դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2020 թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Դիմողը հայտնել է, որ դիմելով դատարան՝ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն պահանջել է «ՌԻՄԿ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սնանկ ճանաչել: Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ի վճռով «ՌԻՄԿ ԱՎՏՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ, իսկ 2017 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ պարտապանի սնանկության գործով

կառավարիչ է նշանակվել: Սնանկության վարույթի ընթացքում հնարավոր է եղել հավաքագրել այնքան գումար, որ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահանջն ամբողջությամբ բավարարվի, ուստի վարույթի միակ պարտատեր է մնացել դիմողը: Սնանկության կառավարիչը թույլ չի տվել պարտատերերին որոշելու հատուկ հաշվի մնացորդի ճակատագիրը և ֆինանսական միջոցների կառավարման հարցը հանել է օրակարգից այն պատճառաբանությամբ, թե օրենսդրորեն դա իր բացառիկ լիազորությունն է, իսկ պարտատերերը այդ հարցի որոշման մասով դերակատարում չունենին: Սնանկության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ «ՌԻՄԿ ԱՎՏՈ» ՍՊԸ-ի և դիմողի կողմից ներկայացված առարկությունները մերժվել են, իսկ սնանկության գործով կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագիրը՝ թողնվել է անփոփոխ:

Այնուհետև, վերաքննիչ քաղաքացիական դատարանը սնանկության դատարանի 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ դիմողի բերած վերաքննիչ բողոքը 2019 թվականի մայիսի 16-ին որոշմամբ բավարարել է՝ վերացնելով բողոքարկված դատական ակտը, և հարցն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի մայիսի 16-ի որոշման դեմ վճարել բողոք է ներկայացրել սնանկության գործով կառավարիչը: Վճարել դատարանը 2020 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ վճարել բողոքը բավարարել է, բեկանել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի մայիսի 16-ի որոշումը, և օրինական ուժ տվել սնանկության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշմանը:

Դիմողի ներկայացմամբ սույն գործով եռաստիճան դատական համակարգի առջև ներկայացված էր իրավական հարցադրում. արդյո՞ք «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «պահանջների բավարարման չափ» արտահայտությունը վերաբերում է սնանկության կառավարչի իրականացրած պահանջների բավարարման չափին, թե՞ յուրաքանչյուր միջանկյալ բաշխման ծրագրով իրականացված բավարարման չափին: Այս հարցադրման հստակ պատասխանի բացակայությունն էր, որ, ըստ դիմողի, իրավական անորոշության աղբյուր է:

Ըստ դիմողի՝ եթե «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «պահանջների բավարարման չափ» արտահայտությունը մեկնաբանվեր որպես յուրաքանչյուր միջանկյալ բաշխման ծրագրով իրականացվող բավարարման չափ, հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ կառավարիչը պարտապանի գույքի վաճառքից կամ այլ կերպ օտարումից ստացված կամայական չափով գումար կուտակվելու դեպքում փոքր չափերով և հաճախակի բաշխումներ կիրականացներ՝ ավելի շատ վարձատրություն ստանալու նպատակ հետապնդելով: Մինչդեռ, սնանկության գործով կառավարչի ինստիտուտը կոչված է վերահսկելու պարտապանի ֆինանսական վիճակը, պահպանելու պարտապանի ֆինանսական միջոցները՝ որպես վերջնական նպատակ ունենալով ապահովել պարտապանի նկատմամբ պարտատերերի պահանջների լիարժեք բավարարումը:

Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը խախտում է իրավական որոշակիության սկզբունքը և միջամտում է սնանկության գործերով պարտատերերի, տվյալ դեպքում՝ դիմողի սեփականության իրավունքին, քանի որ Վճռաբեկ դատարանն իր մեկնաբանությամբ նոր նորմ է ստեղծել, որը զրկում է դիմողին այն հավանական պահանջի բավարարումից, որը կատանար, եթե նոր նորմը չստեղծվեր, և նորմն ունենար այլ մեկնաբանություն:

Դիմողն արձանագրել է, որ ժամանակ առ ժամանակ բաշխումներ իրականացնելու հարցի դեմ որևէ առարկություն չունենալով և ընդունելով «միջանկյալ բաշխման» ինստիտուտի կարևորությունը, համաձայն չէ Վճռաբեկ դատարանի եզրահանգման հետ, որը չի բխում ներկայացված հարցադրումից և Վճռաբեկ դատարանի ընթացիկ վերլուծություններից: Ուստի, վերավարձատրության չափը որոշելու համար նախորդ բավարարումները չդիտարկելն անընդունելի է համարել և գտել, որ նման մեկնաբանությունը հակասահմանադրական է:

Դիմողի կարծիքով՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը չի ապահովում բոլոր կողմերի շահերի հավասարակշռությունը, քանի որ պարտատերերի իրավունքների և շահերի դեմ կամայականությունը զսպելու և հակակշռելու որևէ գործիք տրված չէ, մինչդեռ, խնդիրը պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանությունն է: Տվյալ դեպքում սահմանափակվել է սեփականության իրավունքը, իսկ այդ սահմանափակման հիմքում դրվել է բավարար հստակության հատկանիշներ չունեցող օրենք, վիճարկվող նորմին տրված մեկնաբանության մեջ սահմանված չեն հանրության այն շահերը կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության այն նպատակները, որոնք բավարար կլինեին պարտատերերի սեփականության իրավունքը սահմանափակելու և տրված մեկնաբանության շնորհիվ նրանց՝ իրենց օրինական ակնկալիքից զրկելու համար:

3. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով դիմումը և դրան կից դիմողի ներկայացրած նյութերը, գտնում է, որ սույն գործում անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը բացակայում են: Մասնավորապես՝

ա) դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,

բ) դիմողն իրավունք ունի դիմել Սահմանադրական դատարան, այն է՝

- դիմողը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- դիմողի նկատմամբ կիրառվել է սույն դիմումով քննության առարկա դարձված իրավանորմը դատարանի վերջնական ակտով,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

գ) դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

դ) դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- ե) դիմումն ակնհայտ անհիմն չէ,
- զ) դիմողը պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին:

Նախագահող՝

Դատավորներ՝



30 սեպտեմբերի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-49